

Դպրոցականների հանրապետական օլիմպիադա

(2017-2018 ուստարի)

Հայ գրականություն

XII դասարան (տևողությունը՝ 180ր.)

Սիրելի՛ մասնակից. հաղթիր՛, և հաղթանակը նվիրի՛ր գալիք տոնակատարության հերոսներին, որոնց անձնուրաց հավատի ու խիզախության արդյունքում ունենք մեր չքնաղ հայրենիքը, շենացնենք և արժանի լինենք նրանց հետնորդը կոչվելու պատվին:

Սիրով և հավատով՝ Ս. Աբազյան

1. Ի՞նչ զուգահեռներ կարող ես գտնել 451 և 1918 թվականների միջև. գրի՛ր այդ դարակազմիկ իրադարձությունների գրական արձագանքների մասին (հին և նորօրյա): Պատմի՛ր քո նախընտրած հերոսների մասին:

Ո՞վքեր են «Սարդարապատ» երգի բառերի և երաժշտության հեղինակները: 5մ.

2. Ո՞ւմ հիշատակին է նվիրված «Ալպիական մանուշակ» պատմվածքը, և ի՞նչ հարցեր է շոշափում հեղինակը, ի՞նչ զուգահեռներ է անցկացնում: Ո՞ր հեղինակի ո՞ր բանաստեղծության մեջ է հիշատակվում այդ մասին:

Գրի՛ր՝ ո՞ւմ է նմանեցնում հեղինակը ալպիական գեղեցկուհուն. ո՞ւմ է հիշեցնում գեղեցկուհին: 5մ.

3. Ո՞վ է Խաչիկ Դաշտենցը: Ո՞ր ստեղծագործությունն է նվիրված 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայոց ազատագրական շարժման նվիրյալներին: Գրի՛ր կարծիքդ այդ ստեղծագործության մասին: Նկարագրի՛ր քո նախընտրած հերոսին:

Հիշի՛ր վարժապետի հայոց այբուբենի տարբերակը: 5մ.

4. Ի՞նչ է պատկերում Համո Սահյանի «Ինչո՞ւ հիշեցրի» բանաստեղծությունը:

Ինչո՞ւ է արտասվում հայրը տարիներ հետո: Գրի՛ր մեկ քառատող այդ բանաստեղծությունից: Ինչպիսի՞ բանաստեղծ է Համո Սահյանը: Ո՞ւմ ստեղծագործական ժառանգորդն է իրեն համարում Սահյանը:

5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝

/Ս. Աբազյան/